



Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վ Ա Ն Ք Ի Օ Ր Ե Ր

(Նյու-Յորք, 1972 թ., 88 էջ, հեղինակ՝ Ծեն-Մահ)

«Վանքի օրեր» խորագիրը կիրե բանաստեղծություններու այն հատորը, որ մեզի կուգա **Ծեն-Մահ** ծածկանունով բանաստեղծեն: Այս խորհրդավոր անունը կրող հեղինակը Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ Ամսիկին Թորգոմ վարդապետ Մանուկյանն է, այժմ Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոսը: Հատորը կամփոփե մեծ մասամբ, ինչպես վերագիրն ալ կթելադրե, վանքի կյանքեն ու միջավայրեն քաղված ներշնչումներ: Սրբազանի գրական-բանաստեղծական գործունեության սկզբնավորությունը կերթա մինչև քառասունական թվականներու առաջին տարիները, երբ Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի մեջ կսկսի երևնալ **Ծեն-Մահ** ստորագրությունը խորհրդապաշտ տրամադրությամբ համակված ինքնատիպ բանաստեղծություններու տակ: Արդարև, ուշադրության արժանի երեվոյթ մըն է ճիշտ այդ թվականներուն բանաստեղծի մուտքը սիյուրքահայ գրականության սեմեն ներս: **Ծեն-Մահ** ընթերցողներուն պաշտոնապես կներկայացվեր վանքի գրականության ուսուցիչ և արևմտահայ գրականության մեծ երախտավոր Հ. Օշականի կազմած «Հայ գրականութիւն» դասագիրքով: Օշական, ձայն ու կշիռ ունեցող քննադատ, սիյուրքահայ նորագույն սերունդի բանաստեղծներուն մեջ կհայտնաբերեր Ծեն-Մահը, ի հեճուկս գրական ասպարեզի վրա Ակատվող ընթացիկ ճաշակներուն և կաղապարյալ ըմբռնումներուն...:

Ս. Հակոբյանց վանքը, որ անցած են բանաստեղծի պատանությունն ու երիտասարդության որոշ տարիները, ճշանակալից դեր մը վստաղար սիյուրքահայ գրքի ու գրա-

կանության զարգացման մեջ, ինչպես նաև իր Ապաստը կբերեր տոհմային դաստիարակությամբ մտավորականներու պատրաստության ճիգերուն: Թորգոմ պատրիարք Գուշականի ջանքերով և անոր հմայիչ ու պատկանելի անձին ներգործությամբ ստեղծված էր գրականության ու մշակույթի պաշտամունք մը, որուն շունչով ու ջերմությամբ տոգորված միջավայրը, ավելի հետո՝ գրագետ-քննադատ Հ. Օշականի, արվեստաբան-իմաստասեր Ծ. Պերպերյանի և ներկա պատրիարք-բանաստեղծ Եղիշե արքեպ. Տերտերյանի (Եղիվարդ) անմիջական ազդեցությամբ վանքը վերածած էր տեսակ մը գրական կեդրոնի: Հոն մտնող-ելլող ամեն պատանի իր մեջ կկրեր մասնիկ մը այդ պաշտամունքի ոգիեն...:

Եվ, ահավասիկ, 1939 թվականին էր, որ Ծեն-Մահ առաջին անգամ կերևեր Թորգոմ պատրիարքի մահվան Ակիրված «Սիոն» ամսագրի հատուկ թիվին մեջ, որուն կմասնակցեին նաև իր սարկավազ ընկերները մեծ հոգևորականին և մտավորականին կորուստը ողբացող իրենց գրվածքներով: Ինչ որ ճշանակալից էր այն ատեն, լույս տեսած բոլոր այդ չափածո գրվածքներուն մեջ ամենեն ավելի արտագրավն ու հոգիչը, ամենն ավելի խոհ և բանաստեղծական տրամադրություն արտահայտող քերթվածը Ավետիք արկ. Մանուկյանի ստորագրած բանաստեղծությունն էր («Օրերդ որո՛ւ...»), որ արդեն հասունցած և կազմավորված բանաստեղծի մը գոյությունը կհայտնէր:

Այդ խոստումնալից ու սրտառույ քերթվածեն վերջ, Թորգոմ արեղա «Սիոն» ամսագրի էջերուն մեջ տակավ պիտի գտնէր բանաստեղծական իր ուրույն դիմագիծը, պիտի դառնար Ծեն-Մահ և պիտի կոչվեր

անկեղծ շեշտերով երգելու իր պատարագ-  
յալ հոգիին տրամաժոր սպրումները, որոնք  
պիտի կազմեն և ներկա հատորին բովանդա-  
կությունը:

Ամենեւ առաջ «Վանքի օրեր» գիրքը աշ-  
քի կզարնէ հատկանշական բարեմասնու-  
թյամբ մը. առիկա բանաստեղծի ներքին  
աշխարհին միության վկայությունն է, ար-  
ժանիք մը, որ գիրքին տված է համոզակա-  
նության ուժ: Մենք կտեսնենք միևնույն հո-  
գին իր վիշտերուն ու ցնծություններուն, իր  
կարոտներուն և երազանքներուն մեջ. հա-  
կադիր վիճակներ ու սպրումներ, որոնք,  
սակայն, ներքին ներդաշնակությամբ կլրաց-  
նեն ու կամբողջացնեն գիրքը: Այդ միևնույն  
հոգին է դարձյալ, որ գիտէ իր անկեղծ  
հուզումներն ու հոգեկան սպրումները հա-  
կակշռել զսպությունը ու չափավորությամբ,  
անձնատուր չըլլալ իր տարերքին: Բանաս-  
տեղծի նյութերու աշխարհը վանքն ու վա-  
նականներն են, մարդկային այլապես շահե-  
կան ու իրավ սպրումներուն առարկան, մի-  
ջավայրը, ուր կուգան միանալու մանկու-  
թյուն, պատանություն, բնություն, սեր,  
հայրենիք և այլ առնչակից իրողություններ,  
զորս հեղինակը կշնչավորէ իր հոգիի միև-  
նույն ջերմությամբ ու խանդաղատանքով:  
Բանաստեղծին քնարական հերոսը միշտ  
«երիտասարդ ու դժգույն արեղաներ»-ն են,  
որոնք իրենց առանձնացման ու մեկուսա-  
ցումին մեջ՝ տառապանքի կամավոր որդե-  
գրությամբ, անիմանալի խորհուրդ մը կըզ-  
գենուն ամեն անգամ, որ դիտող աշքին նա-  
վածքն իյնա անոնց վրա: «Նոճին», «Վան-  
քի բակին», «Վանքի տղա», «Քալե, հոգի,  
քու ճամփեդ», «Խարտյաշ որան օրերուս»,  
«Տեսիլք-ներկան» և, վերջապես, «Լուսն  
ծաղիկ» և «Ըսէ, ինչպե՞ս լեցնել» քերթված-  
ներն յուրաքանչյուրը թեև առանձին և  
տարբեր պահերու ծնունդ, բայց զգալու-  
թյամբ ու հոգեկան անդրադարձմամբ բոլորն  
ալ կմիանան ու կխմբավորվին: Անոնք հո-  
րինված ըլլան այլաբանական եղանակով,  
թէ ողողակի իմաստով, միշտ կներկայանան  
վշտի ու տխրության ալեծուսի տրամադրու-  
թյամբ մը, որ անդեմականի երջանկության  
կարոտն է այս աշխարհի վրա: Մենք այդ  
քերթվածներուն եղերականությունը գրեթէ  
չենք կրնար հասկնալ մեր աշխարհիկ մար-  
դու ընթացիկ չափանիշներով, մինչ անոնց  
տողերուն տակ թաքշած Տեսիլքի մարդու  
խոռվքներն ու անձկությունները կլուսավոր-  
վին, և մեմավորի, մեմակյացի անոր ա-  
ռանձնությունները կիմաստավորվին դեպի  
իր իդեալը տանող ճամփուն պայծառ հա-  
րացույցներով:

Գիշերին մեջ, մեղմ ու խոր երգեր զայն  
մերթ կցողեն...:  
Ցա՛վ մը թաքուն թե աղոթք՝ փայտեր  
մարմինն են անոր...  
Մինչ շուրջն իրեն մութ ծառեր գլուխ կն-  
նեն դառնօրոր,  
Վանքի բակին, մեկուսի, ըսես դեռ նոր  
արեղա,  
Հավերժությունը գրկած, լուռ, երազին իր  
կերթա...:

Անոնք, «արեղաները», սակայն, կյանքն  
հրաժարած և կյանքը ուրացողներ չեն, այլ  
գաղափարական լավագույն կյանքի մը տեմ-  
չացողներ: Այս առումով, հանր'ն տեսա-



«Վանքի օրեր» գրքի շապիկի ստացին էջը

կան կյանքի մը բերկրանքին, այս աշխարհի  
մեջ անոնց ողջակիզումը ուրախ ու ցնծուն  
երգի նման «Ծեմ-Մահ» մըն է, զվարթ մա-  
հացություն մը ա՛յս աշխարհի համար, որ  
վեհացնող ու վսեմ բան մը ունի իր մեջ և  
անով իսկ «իմաստ» և «խորհուրդ» կրովա-  
նակե («Վանքի բակին»):

Կտեսնենք, որքեմն, որ վանքը կյանքի  
պայքարեն զինաթափ եղած հոգիներու հա-  
մար փախուստի ու փախստականի ապաս-  
տարանը չէ, որ գային անփույթ երանու-  
թյամբ իրենց օրերն անցնելու մեղկ ու ան-  
աշխատ մարդիկ: Այլ, ընդհակառակը, լույ-  
սին և երազին տեմչն ունեցող հոգիներու

Հուլին խողանքը լույսե՛ր երբոր թափե  
վերերեն,

սրբարանն է, ուր բարձրին ու բարձրագույնին համար երազ, ձգտում և կիրք կպահանջվին, մտքի կուրության ու խավարի դեմ անդուլ մարտնչումներով.

Լույս-ճակատով ի՞նչ կեցեր սա ծառերուն դեմ անտեր, Տերևներուն կնայիս, ծաղիկներուն, ու դողին, Որ կանչերուն հետ մեռնող, հովն ու ձայները թողին...: Վանքի՛ տղա, տեսիլքիդ քալե՛ ճամփան ըստվերուն...

և կամ  
Կհեռանամ երբ քեզմե, իմ աչքերուն մեջ սառած  
Հարցումն է շեշտ՝ ինձմե քեզ.—«Կյանքին մեջեն կրնա՞ս դուն  
Քալել այդպես միայնակ, միշտ հոգիով ալ գեղուն...»: —Դարձիր տեսիլք այն կյանքին, ուր օրհնըվիս պիտի դուն...:

Բանաստեղծ սրբազանը, իր իսկ բառերով, «Գազաթներու տեսիլքին» անձնվեր ու անվերապահ ուխտավորն է, միշտ մտասելվեռ «Մե՞ծ մարդերու հավերժության, հրաշքին...»: Եվ այդ շունչով ալ ահա կուգե տոգորել այն կոչումնավոր տղաքը, որ կուգան իրեն և կամ կգտնվին իր շուրջը: Սակայն բանաստեղծը միևնույն ատեն կգիտակցի, որ այդ ճամփան դյուրին չէ: «Հոգիին ցունց տվող» բազմաթիվ փորձություններ կուգան կյանքեն՝ հուշեր, հույզեր, կիրքեր, հաճույքներ, իբրև «Մույթ անտառի» կախարդական երածշտություն, կպարավանդեն հոգին իր ազատ և վերապահ ճախրին մեջ ու վար կքաշեն մարդը: Իրերամերժ բախումն է այս իրականին ու երազին, կիրքին ու հոգեկանին, անցյալին ու ներկային: Անոնց հակադրությունեն, հակասությունեն առաջացած տառապանքին առջև տխուր է բանաստեղծը իր քերթվածներուն ծնունդ տվող պահերուն մեջ: Բայց կհաղթանակե ա՛ն, որ կրնա այդ առաձիգ բևեռներու ձգողությունեն ազատագրվի...:

Ծեն-Մահ լույսի, բույրի, գույնի և սուվերներու զգայությանց բանաստեղծն է, խորհրդապաշտության երանգավորություններ, միացած իրապաշտ սպրումներու, կկազմեն իր արվեստին բաղկացուցիչ տարրերը: Մարմրուն կարոտ մը մարմանդ բոցի պես հեգիկ կծփա իր քերթվածներուն մեջ և անոնց տողերը կվերածե երկարաձիգ ու օրորուն դաշներգության մը: Նկատելի է, երբեմն, որ այդ քերթվածներուն թելադրած սպրումները կգերազանցեն իրենց նյութը:

Բանաստեղծի հոգին ընդունակ է, իր ընդգրկած երևույթը անմիջապես վերածելու բանաստեղծական դրության մը: Ասիկա կենթադրե՛ն ներքին գերզգայուն վիճակ մը, որ փոքրիկ ազդանշանի մը պետք ունի իր փերեն դուրս հորդելու համար: Բայց, ինչպես նշեցինք վերը, արվեստի զսպվածությունը կսանձահարե, կհակաշփոթե ներքին հորձանքը, զգացումի սաստկությունը չսփալորելով ի հաշիվ իմացական սպրումի: Այս իմաստով, դասական քերթված մըն է «Լույսե ծաղիկ» բանաստեղծությունը, ժողովածուի լավագույն ստեղծագործություններն մեկը: Նյութը պարզ է. մանկության վերադարձը իր շարունակությունը հանդիսացող երիտասարդության: Մեկ անձի մեջ այդ երկու հասակներու հանդիպումը սըրտատույ պահ մըն է.

Հարածըփուն ու բեկբեկ բույրովն այս թարմ հասակիդ, Այսօր, եկար, հոգվույս դեմ բացիր սահաճ մ'անցյալեն, Մի՛նչ քեզ մոռնալ կկարծեր ան տարիներ այսքան վերջ. Դո՛ւն՝ շողշողո՛ւն լիովին, գըտար զիս մույթ ու լըռին...: Կարճ՝ երկվայրկյան մը միայն, դըպար հոգվույս, լույծ, թոնուտ, Ու փորձեցիր իջնել խոր, սև-սաթ դուլլովն աչքերուդ. Բայց հեռացար՝ շըվարուն, նոր սա երգեն քեզ օտար...: Զըվարթ տղան փընտրեցիր, ու չը գտար... տխրեցար...:

Բանաստեղծը կերգե այդ երկու հասակներու բաժանումեն, օտարացումեն առաջացած հոգիին ցավը: Լույսին, արևին ու բնության բացվող մանկությունը չի կրնար հսկրնալ գաղափարական երիտասարդի կյանքեն ունեցած սա կամավոր «փախուստը»:

Հոգիդ ծաղիկ մ'էր լույսե, բացվող՝ կյանքին, արևուն, Ես մենամոլ մը թախժոտ, կյանքեն փախչող-խենթ-հեռո՛ւն. Դուն չգիտցար ասիկա, ու հեռացար ալ այդպես...:

Նույնպիսի սրտահույզ ու հարազատ շեշտերով կհնչեն բանաստեղծի բնարին հայրենասիրական լարերը: Այդ բանաստեղծությունները առանձին, տարանջատ սպրումներ չեն բանաստեղծի հոգիեն ներս, այլ ընդելուզված և սերտորեն միացած են անցյալեն, առօրյալեն, միջավայրեն ու շրջապատի այլ երևույթներեն արձագանքվող սպ-

րումներուն: Հայրենիքի սեր, հողի սեր, տան, երդիկի սեր կոգեկոչվին ինչպես պատմական անցյալի հիշատակներուն, այնպես ալ ներկայի վերելքին ընդմեջեն: Այս շարքեն են՝ «Ամալքներու վրան», «Դուն մեր հրաշք», «Հո՛ղ, հիշելու համար քեզ», «Հին իմ տունեն» և մասամբ՝ «Մայրավանքի զանգակ» քերթվածները: Բանաստեղծը այն «սերունդի վկան է», որուն մանկությունը զուգադիպեցալ մեր մեծ Տառապանքի վաղորդայնին բացվող «ամալքներուն»: Հայրենիքը (Արևմտահայաստանը) իր անկարելի ողբերգության մեջ դիտապատ՝ իր պատմական անցյալի հիշատակներով սկսալ հուզել և հուսադրել անհիսված սերունդի մը տարահալած մնացորդացը: Բայց ինչպես միշտ, այս անգամ ևս շատերու համար եթե ոչ հայրենիքը փոխարինող, գոնե անոր պատրանքը տվող իրողությունը մնաց վանքը, եկեղեցին, որպես «տրտում պալատ մը հիմա» իր «կաթուղիկե կառույցներուն» և վեհանիստ լեռներուն խորհուրդով, որ հավատք կներշնչե դեպի բացվելիք նոր առավոտները («Ամալքներու վրան»):

Հարության այդ գաղափարն է ահա, որ գեղեցկորեն արտահայտված է Էջմիածնին նվիրված «Դուն մեր հրաշք» ներքողական բանաստեղծության մեջ: Էջմիածինը կխորհրդանշե հայ ժողովուրդը, հայ ժողովուրդի ոգին, անոր անցյալն ու պատմությունը, որ միշտ կենդանի մնացած է ու կմնա ընդդեմ ճակատագրի պատուհասներուն: Էջմիածինն է մտանայես, որ անցյալի փառքին ու ներկայի ծաղկուն վերելքին մեջ ամեն հայու «սփոփանքի կարոտն է և հիվանդ սիրտերուն բուժակը»: Անկա, դարեր շարունակ, ինչպես ուրիշ նվիրական անուն մը, Արարատը, իբրև հուռույթ կախված է հայ ժողովուրդի հոգիին վերև զայն ապահով պահելու համար այս աշխարհի դժբախտություններեն ու ոգեկան կործանումներեն:

Միայն անունդ—հրա՛շք—բավ է պանդուխտ իմ հոգիս  
 Կործանումե և անկուր իր նահանջեն կորզելու.  
 Էջմիածի՛ն, դուն կանգո՛ւն... Թող միշտ հպարտ կոթողվիս  
 Իմ պապերեն իբրև ձայն, ու մայր հողեն այցելու:  
 Ծեռ-Մահի ներկա տաղարանը, չենք գի-

տեր, իր հաջորդները կունենա՞ արդյոք, թե ոչ: Բայց մեկ բան կրնանք վստահորեն ըսել, թե «Վանքի օրեր» ժողովածուն ամփոփագիր մեկ մատյանն է կյանքի մը և հոգիի մը պատմության: Բանաստեղծի ներշնչման աղբյուրը կյանքն է ընդհանրապես՝ տարբեր հանգամանքներու կնիքով և տարբեր պահերու շունչով արտահայտություն գտած: Իր տեսիլքը մարդու իդեալն է: Իր հոգիին աչքերը կսևեռին կյանքին ու մարդուն, որպեսզի վերծանեն անոնց աստվածային խորհուրդը: Բանաստեղծի վերջնական բաղձանքն է մարդը տեսնել ներքմապես լուսավոր, իր «նիղն ու ստերջ» կիրքերեն ազատագրված:

Ու լույսին մեջ, երանի՛, լա՛յն, թեև իրենց  
 բանային  
 Մեր տեսիլներն անդրանցող մեր հոգի-  
 նե՛րն անըստվեր,  
 Ըսպասն իրա՛վ անձուկին, հավերժու-  
 թյա՛ն, երկնքի՛ն,  
 Կյանքի մեր գիրքը ընող լույս էջերու  
 փունջ մ՛աղվոր...

Արդարև, «լույս էջեր»-ով գողտրիկ քերթվածներու դիվան մըն է Ծեռ-Մահի բանաստեղծություններու ներկա ժողովածուն: Ի՛նչ նյութի մասին ալ գրելու ըլլա հեղինակը, միշտ սիրող ու ջերմ սրտի մը անկեղծ շեշտերը կթրթուան անոր տողերուն մեջ: Տիրապետող ազդեցությունը ընդհանրապես թեքելանական է, որուն ետևեն քաղց մեծ մասամբ ետպատերազմյան սփյուռքահայ բանաստեղծությունը: Օջականյան արվեստին հատուկ բառ ու բանի, խոսքի գեղարվեստական պատկերավորման ձևերն ու եղանակները զգալի տեղ ունին բանաստեղծի նախասիրություններուն մեջ:

Ծեռ-Մահի քերթվածները մարդու ազնրվացման, վեհացման և հանուն գերագույն տեսիլքի մը՝ հոգիի անմնացորդ ընծայաբերման հուզիչ վկայությունն են: Կրոնական, եկեղեցական, ազգային և կրթական գործունեությանց առընթեր բանաստեղծական այս վաստակը ամենեն մնայուն և արժեքավոր արտահայտությունը կթվի ըլլալ սրբազանի բազմամյա ճիգերուն:

ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ

Լեհիճական

